Հրատարակված է՝ Ջալ 38, Վիմ 249

1 *Կամաւն Ա.յ, ես Ջաղէլ ամիր հէճիպս միաբանեցա սբ Ածածնիս. հայրս*
Յոհանէս եւ միաբանքս ի տաւնի աւետեց Ածածնիս եռուն զամ(ենայն)
եկեղեցիքս պատարագ։

Մանոթություն.— *Ժամանակը որոշել ենք ամիր և հէճիպ (հեճուպ) տիտղոսներով, որոնք մուտք են գործել Հայաստան 13-րդ դարում։*

Տարբերություն.— Ամիր հեճիպ Ջաղելի տիտղոսը (սենեկապետ) Ջալ կարդացել է ես Ջինաղես և մայր իմ Հանիպս։

107. Գրատան մուտքի ճակատակալ քարի վրա դրսից

(Լուս. № 67)

Հ ՈՂԲ Մ 1243

Հրատարակված է՝ Ջալ 26—27, Դրիմ 60, Վիմ 93

1 *Ի թվին*
2 *ՈՂԲ։ Կամաւն Ա.յ ես՝ Վ-*
3 *ասակ մեծ յուսով միաբանեց-*
4 *ա սբ Ածածնիս եւ էտու արդիւնս ինչ. եւ բնակ-*
5 *ինչք սբ ուխտիս հաստատեցին գրով բ պատար-*
6 *ագ ի տաւնի Կիւրղի։ Ով խափանէ՝ մեր մեղացն տէր է, կ-*
7 *ատարիչքն աւրհնին յԱ.յ։*

Մանոթություն.— *1. Հաստատեցին գրով հավանարար ակնարկ է վկաների հաստատությամբ պայմանագիր կազմելու մասին։*

2. Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ արձանագրություններից եկել ենք այն եզրակացության, որ երբ վանքին տրվող նվերները ոչ թե իրենց անունով, այլ ընդհանուր արդյունք բառով են հիշատակվում, այդ դեպքում նվիրված առարկան կալվածք, այգի, ջրաղաց, գյուղ կամ որևէ այլ անշարժ գույք չի, այլ շարժական գույք է (գրքեր, ձեռագիր գրքեր, արծաթագործության նմուշներ, եկեղեցական իրեր և այլն)։ Անշարժ գույքը միշտ հիշատակվել է անվանական կերպով. դա արվել է այն նպատակով, որ նվիրատուի սերնդներից որևէ մեկը, կամ մեկ ուրիշը հետագայում այդ գյուղի, կալվածքի, ջրաղացի, հանդամասի վերաբերյալ պահանջ չներկայացնի և չտիրի։ Շարժական գույքի նկատմամբ այդ վտանգը չկար, ուստի շատ դեպքերում, երբ նվիրատուն չէր պահանջում, չէին գրում նվերների անունը, կամ գրում էին միայն կարևոր և թանկարժեք առարկաների անունները։

Նկատելի է նաև, որ վիմական արձանագրությունները նվիրատվական փաստագիր համարվելով հանդերձ, շատ անգամ նվիրատվությունը մի շարք վկաների ներկայությամբ հաստատվել է նաև առանձին սիգելով, որ թղթի կամ մագաղաթի վրա էր գրվում և տակին, բացի երկու կողմերի ստորագրություններից ու կնիքներից, գրվում էր նաև գործարքին ներկա գտնվող վկաների ստորագրություններն ու կնիքները։ Պարզ է, որ վկայության էին կանչվում տեղի իշխանավոր մարդիկ։